

«Գրանցված է»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2013 թվականի _____ «___»
Պետական գրանցման համարը _____
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար՝

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

ՀՐԱՄԱՆ

15 նոյեմբերի 2013թ.

N_80 ն

**ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ՝ ԱՆՏԱՌԱՀԱՏՄԱՆ ԵՎ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՈՄՍԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքի 45-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) պետական անտառների անտառօգտագործման՝ անտառահատման և անտառային տոմսերի տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) անտառահատման և անտառային տոմսերի ձևերը՝ համաձայն N 2 և N 3 հավելվածների:

2. Մույն հրամանն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
Հաստատված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և
բնական ռեսուրսների վարչության պետի
2013 թվականի _____ -ի
N _____-Ն հրամանով

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ՝ ԱՆՏԱՌԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՈՄՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անտառներում և անտառային հողերում բնափայտի մթերում և կողմնակի անտառօգտագործում իրականացնելու նպատակով անտառահատման և անտառային տոմսերի լրացման, տրամադրման, հաշվառման և պահպանման հարաբերությունները:

2. Բնափայտի մթերման դեպքում անտառօգտագործողին տրվում է անտառահատման, իսկ կողմնակի անտառօգտագործման դեպքում՝ անտառային տոմս:

3. Անտառահատման և անտառային տոմսերը հատուկ հաշվառման ենթակա փաստաթղթեր են, որոնք ունեն տպագիր վեցնիշանոց համարակալում և կազմված են երեքական օրինակից:

4. Անտառահատման տոմսի լրացման համար հիմք է հանդիսանում հատկացված հատատեղի հաշվեգնահատման ցուցակը և հատատեղի անձնագիրը (N 1 ձև և N 2 ձև):

5. Անտառահատման և անտառային տոմսերն «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից տրամադրվում են «Անտառտնտեսություն» մասնաձյուղերին, որոնք էլ իրենց հերթին սույն կարգի համաձայն լրացնում և տրամադրում են անտառօգտագործողներին:

6. Յուրաքանչյուր հատատեղի շահագործման կամ կողմնակի անտառօգտագործման տեսակի համար անտառօգտագործողին տրվում է առանձին անտառահատման կամ անտառային տոմս:

7. Անտառահատման և անտառային տոմսերը հիմնական փաստաթղթեր են՝ որոնց հիման վրա իրականացվում են հետևյալ գործառույթները՝

1) մթերվող բնափայտի հաշվառում՝ ըստ շինափայտի, վառելափայտի և ցախ ու ձյուղիկների,

2) մթերվող ոչ բնափայտային անտառանյութի հաշվառում՝ ըստ պտուղների, հատապտուղների, ընկույզների, սնկերի, ուտելի բույսերի և դեղաբույսերի, տեխնիկական հումքի, ինչպես նաև մեղվանոցների փեթակների տեղադրման, խոտհնձի և արածեցման,

3) մթերվող բնափայտի և ոչ բնափայտային անտառանյութի դիմաց վճարվող գումարի հաշվարկում և հաշվառում,

4) պետական կառավարման լիազոր մարմնի, ինչպես նաև անտառային տնտեսությունն վարող կազմակերպության կողմից հսկողության իրականացում՝ անտառօգտագործողի կողմից անտառահատման և անտառային տոմսերով սահմանված անտառօգտագործման նկատմամբ:

8. Անտառօգտագործողն աշխատանքները սկսելու և տարածքը բնության մեջ ճշտելու նպատակով անտառահատման կամ անտառային տոմսը ներկայացնում է տվյալ տարածքի անտառապետին:

9. Այլ հատումներն իրականացվում են սույն կարգով տրված անտառահատման տոմսի հիման վրա:

II. Անտառահատման և անտառային տոմսերի տրամադրումը

10. Լրացված անտառահատման կամ անտառային տոմսի մեկ օրինակը տրվում է անտառօգտագործողին, որն այն պահպանում է մինչև տոմսում նշված ժամկետի ավարտը:

Երկրորդ օրինակը տրվում է տարածքի անտառապետին, որն անտառահատման տոմսը հատատեղի տեղագնման արձանագրության (N 3 ձև), իսկ անտառային տոմսը կողմնակի անտառօգտագործման աշխատանքների ավարտման վերաբերյալ արձանագրության (N 4 ձև) հետ միասին հանձնում է «Անտառտնտեսություն» մասնաձյուղ:

Երրորդ օրինակը, հաշվեգնահատման ցուցակի և հատատեղի անձնագրի հետ (լրացնելուց հետո պատճենն երկու օրվա ընթացքում տրամադրվում է Կազմակերպությանը) պահպանվում է «Անտառտնտեսություն» մասնաձյուղում՝ ավագ անտառապետի մոտ:

11. Նոր ձևի անտառահատման և անտառային տոմսեր ստանալու դեպքում, տնտեսությունում եղած, սակայն չօգտագործված նախկին անտառահատման տոմսերը ենթակա են ոչնչացման՝ համաձայն կազմված արձանագրությունների:

12. «Անտառտնտեսություն» մասնաձյուղերը, որոնք ստանում են անտառահատման և անտառային տոմսերը, տարեկան հաշվետվության հետ միասին Կազմակերպությանը ներկայացնում են նաև հաշվետվություն նշված տոմսերի մնացորդի, մուտքի և ելքի վերաբերյալ:

III. Անտառահատման և անտառային տոմսերի լրացումը

13. Անտառահատման և անտառային տոմսերի բոլոր օրինակները լրացվում են գրիչով և հերթականությամբ համարակալվում են անտառահատման և անտառային տոմսի ձևաթղթերի մուտքագրման և հաշվառման գրքի (այսուհետ՝ Գիրք) համարով, որով օգտագործման է դուրս գրվում տոմսը: Գիրքը՝ կարված և կնքված վիճակով, «Անտառտնտեսություն» մասնաձյուղին տրամադրում է Կազմակերպությունը:

14. Անտառահատման տոմսում՝ հետևյալ սյունակներում լրացվում են՝

1) Օգտագործման տեսակը – նշվում է անտառավերականգնման, խնամքի, սանիտարական և այլ հատումները,

2) Հատման եղանակը – համատարած, աստիճանական, ընտրովի և այլ հատումներ: Խնամքի հատման դեպքում «ընտրովի» բառից հետո անհրաժեշտ է լրացնել խնամքի հատման տեսակը (լուսավորման, մաքրման, նոսրացման,

անցումային, սանիտարական), իսկ այլ հատումների դեպքում՝ հատման տեսակից հետո (համատարած, ընտրովի) նշել հատման նպատակը,

3) Հաշվառման եղանակը – հաշվառվում են առանձին ծառատեսակները կամ փորձահրապարակները,

4) Հիման վրա – նշվում է անտառահատման տոմսի տրամադրման հիմքերը (հրաման, պայմանագիր),

5) Թույլատրվում է – նշվում է անտառօգտագործողի լրիվ անվանումը (իրավաբանական կամ ֆիզիկական անձի գտնվելու կամ բնակության վայրը, անձնագրային տվյալներ), ինչպես նաև այն տարվա հատատեղային ֆոնդը, որը նախատեսվում է շահագործել,

6) Տեքստային աղյուսակ – նշվում է անտառների խումբը, քառակուսին, հատվածը, հատամասերն՝ ըստ զբաղեցրած տարածքների, մատղաշի պահպանման տարածքը և մեկ հեկտարի վրա մատղաշի քանակը՝ հազար հատով, կնքված ծառատեսակները և քանակը, բնափայտի ծավալը՝ խորանարդ մետրով, այդ թվում շինափայտը, վառելափայտը, ցախը,

7) Մթերված անտառանյութի բնօգտագործման վճարը բյուջե մուծելու ժամկետը – նշվում է վճարման գումարի չափը և ժամկետը,

8) Հատման ենթակա չեն – նշվում է հատման ոչ ենթակա սերմացու ծառերը, դրանց խմբավորումների և այլ ծառերի քանակը՝ հատով, որոնք չեն թույլատրվում անտառօգտագործողին հատել,

9) Մթերումն ավարտելու ժամկետը – նշվում է անտառօգտագործման ժամկետի ավարտը, որը համապատասխանում է բնափայտ մթերելիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվող պայմանագրերում նախատեսվող ժամկետին,

10) Ժամանակավոր պահեստների տեղը – նշվում է այն քառակուսին և հատվածը, որտեղ նախատեսվում է կազմակերպել բնափայտի կուտակման ժամանակավոր (միջանկյալ) պահեստներ,

11) Արտահանումը թույլատրվում է – նշվում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում թույլատրվում է բնափայտն իրացնել (վաճառել) կամ տեղափոխել կուտակման ժամանակավոր պահեստ,

12) Մաքրման եղանակը – նշվում է՝ ըստ հատամասերի, մթերման մնացորդների մաքրման միջոցառումները (հավաքում կույտերով, հետագա արտադրական վերամշակման, տեղի բնակչությանը տրամադրելու, այրման, փտման, տարածքում մնացորդների հավասարաչափ տարածման և այլ նպատակներով),

13) Հատուկ պայմաններ անտառահատման տոմսում փոփոխություններ կատարելու մասին – նշվում է բնափայտի մթերման և արտահանման ժամանակահատվածը, մթերվող բնափայտի հաշվարկված ծավալներում կատարված փոփոխությունները՝ փաստագրելով հիմքերը:

15. Ըստ տողերի անտառային տոմսում լրացվում են՝

1) Անտառօգտագործողի տվյալները - նշվում է անտառօգտագործողի լրիվ անվանումը (իրավաբանական կամ ֆիզիկական անձի գտնվելու կամ բնակության վայրը, անձնագրային տվյալները),

2) Հիման վրա – նշվում է անտառային տոմսի տրամադրման հիմքերը (հրաման, պայմանագիր),

3) Թույլատրվում է – նշվում է կողմնակի անտառօգտագործման տեսակը և հատկացված տարածքը,

4) Տեքստային աղյուսակ – նշվում է կողմնակի անտառօգտագործման տեսակը (արածեցում, խոտհունձ, պտուղ-հատապտուղների հավաք և այլն), չափի միավորը՝

ըստ կողմնարդյունքի տեսակի, մթերվող պաշարը՝ ըստ կողմնարդյունքի տեսակի, բնօգտագործման վճարը (ՀՀ դրամ), անասունի տեսակը (խոշոր, մանր), գլխաքանակը (գլուխ), մեկ գլխի արժեքը (ՀՀ դրամ), ընդամենը գումարը (ՀՀ դրամ), ընդհանուր գումարը ներառյալ ԱԱՀ-ն (ՀՀ դրամ):

16. Անտառահատման և անտառային տոմսի բոլոր օրինակները լրացվում են ճշգրիտ, հստակ և ընթեռնելի:

17. Անտառահատման և անտառային տոմսում գրվածքը մաքրել, ջնջել չի թույլատրվում, սխալ գրվածք կարելի է ուղղել վրան կարմիր գիծ քաշելով:

18. Անտառահատման կամ անտառային տոմսերում նշումներ և ուղղումներ կատարվում են իրավասու անձանց կողմից երեք օրինակների վրա միաժամանակ և նույն բովանդակությամբ և հավաստվում՝ ստորագրությամբ ու կնիքով:

IV. Անտառահատման և անտառային տոմսերի հաշվառումը և պահպանումը

19. «Անտառտնտեսություն» մասնաճյուղի ավագ անտառապետն անտառահատման և անտառային տոմսերի դուրսգրումից հետո դրանք ներկայացվում է հաշվապահություն՝ համապատասխան ձևակերպումներ կատարելու համար, որից հետո անտառահատման և անտառային տոմսերը վերադարձվում է ավագ անտառապետին:

20. Անտառահատման և անտառային տոմսերն՝ ըստ քանակի և համարանիշների, գրանցվում են «Անտառտնտեսություն» մասնաճյուղի Գրքում:

21. Տվյալ տարվա վերջում Գրքում գրանցված, սակայն, չօգտագործված անտառահատման և անտառային տոմսերի ձևերը հաշվառվում և փոխադրվում են հաջորդ տարի, որի վերաբերյալ կատարվում է առանձին նշում և ստորագրվում տնտեսության տնօրենի, ավագ անտառապետի, ավագ հաշվապահի, ինչպես նաև պահպանման և բացթողման համար պատասխանատու անձանց կողմից:

22. Անտառօգտագործման պայմանագրով սահմանված պահանջների պատշաճ կատարումից հետո անտառահատման տոմսի երկրորդ օրինակը սույն կարգով սահմանված փաստաթղթերի հետ միասին «Անտառտնտեսություն» մասնաճյուղում ի պահ է հանձնվում ավագ անտառապետին, այդ մասին համապատասխան գրառում կատարվում Գրքում:

23. Ի պահ ընդունած անտառահատման և անտառային տոմսերն ու դրանց վերաբերյալ բոլոր փաստաթղթերը կարվում են առանձին համարակալված թղթապանակներում:

24. Նշված գործերի պահպանությունն իրականացվում է համաձայն «Արխիվային գործի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի:

ՀԱՏԱՏԵՂԻ ՀԱՇՎԵԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Անտառպետություն _____, պահաբաժին _____, քառակուսի

Անտառամաս _____, հատման տեսակը _____

| Z/h | Ծառատեսակը | Բնի տրամագիծը (սմ) | Շինափայտի երկարությունը (մետր) | Ծավալը, խիսմ | | Z/h | Ծառատեսակը | Բնի տրամագիծը (սմ) | Շինափայտի երկարությունը (մետր) | Ծավալը (խիտ/խամ) | |
|-----|------------|--------------------|--------------------------------|--------------|---------------|-----|------------|--------------------|--------------------------------|------------------|---------------|
| | | | | Ընդամենը | Որից շինափայտ | | | | | Ընդամենը | Որից շինափայտ |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | |

Հատատեղը հատկացրեց՝

պաշտոն,
անուն, ազգանուն,
ստորագրություն

20__ թ. ՀԱՏԱՏԵՂԻ ԱՆՁՆԱԳԻՐ

անտառտնտեսություն, անտառպետություն, թիվ
անտառահատման տոմս

ՏԵՍԱԿԱՆՈՒ ՄՊԱՍՎԵԼԻՔ ԵԼՔԸ

| Հ/հ | Ծառատեսակի անվանումը | Ծառերի քանակը (հատ) | Բնափայտի ծավալը (խիտ/խմ) | | | | | | | |
|-----|-------------------------|---------------------------|--------------------------|-----------------|------------------|----------|-------|-------|------|--|
| | | | ընդամենը | վառելա- փայտ | ցախ և ճյուղիկ | Շինափայտ | | | | |
| | | | | | | ընդամենը | խոշոր | միջին | մանր | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |

Ավագ անտառապետ

անուն, ազգանուն

ստորագրություն

Անտառապետ

անուն, ազգանուն

ստորագրություն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____

20____ թ. «____» _____

ՀԱՏԱՏԵՂԻ ՏԵՂԱԶՆՆՄԱՆ

Հատատեղի տեղագնման _____ անտառտնտեսություն,

անտառպետության

(ակտը կազմողի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը)

Մասնակցությամբ _____

(անտառօգտագործողի անվանումը և ներկայացուցչի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը)

Ծանուցվել է 20__ թ.«____» «__»-ին տեղագնման օրվա և վայրի մասին, որին մասնակցում էին

(ներկա գտնվողների պաշտոնը, ազգանունը, անվան սկզբնատառերը)

Կատարեցինք հատատեղի տեղագնում N____ պահաբաժնի, N____ քառակուսում «____» անտառտնտեսություն» մասնաձյուղին 20__ թ. _____ «__»-ին տրված N__ անտառահատման տոմսով: Հատման եղանակը _____ հաշվառման եղանակը _____ մաքրման եղանակը _____ Ձևման ժամանակ պարզվեց՝

| Աշխատանքի անվանումը | Տարածությունը (հա) | Ընդամենը | Ծավալը խտային (խիտ/խմ) | | Ծանոթություն |
|-----------------------------------|--------------------|----------|------------------------|------------|--------------|
| | | | Այդ թվում | | |
| | | | շինափայտ | վառելափայտ | |
| Անտառահատման տոմսով թույլ է տրված | | | | | |
| Փաստացի կատարված է | | | | | |

Նախատեսվում է երիտասարդ և մատղաշ ծառերի պահպանում ____ հա, 1 հա-ում՝ _____ հատ:

Հատումից հետո պահպանված է երիտասարդ մատղաշ ծառեր _____ հա, 1 հա-ում _____ հատ %:

Թերհատումները կազմում են _____ հա _____ խիտ/խմ:

Անտառից դուրս չբերված շինափայտ, վառելափայտ և այլ անտառանյութեր _____ խիտ խ/մ: Տեղագնման ժամանակ հայտնաբերված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառներում բնափայտի մթերման համար սահմանված կարգի հետևյալ խախտումները.

| Խախտումների տեսակները | Չափի միավորը (խիտ/խմ) | Քանակը (հատ) |
|---|--------------------------|-----------------|
| Տարկետամբ չձևակերպված թերհատումների առկայությունը | | |
| Հատատեղում հատվել են հատման չնշանակված ծառեր | | |
| Տապալվել, ջարդվել կամ վնասվել են հատման չնշանակված ծառեր | | |
| Վնասվել կամ ոչնչացվել են երիտասարդ և մատղաշ ծառեր | | |
| Անտառից դուրսերման համար տարկետամբ չձևակերպված փայտանյութ է թողնվել | | |
| Թողնված են քարձր կոճղեր | | |
| Հատատեղի անբավարար մաքրում | | |

Անտառօգտագործողի կամ ներկայացուցչի բացատրությունը

Չննության մասնակիցների դիտողությունները

Արձանագրության հավելվածները

Ստորագրություններ _____ անուն, ազգանուն

Արձանագրության պատճենը ստացա _____
 Եզրակացություն ակտի վերաբերյալ

Անտառնտեսության տնօրեն

_____ (անուն, հայրանուն, ազգանուն, ստորագրություն)

Տեղագնման ժամանակ հայտնաբերված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառներում ոչ բնափայտային անտառանյութի մթերման համար սահմանված կարգի հետևյալ խախտումները.

| Խախտումների տեսակները | Տարածքը (հա) | Չափի միավորը | Մթերվող պաշարը |
|-----------------------|--------------|--------------|----------------|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

Անտառօգտագործողի կամ նրա ներկայացուցչի բացատրությունը

Ջննության մասնակիցների դիտողությունները

Արձանագրության հավելվածները

Ստորագրություններ _____ անուն, ազգանուն

Արձանագրության պատճենը ստացա _____

Եզրակացություն ակտի վերաբերյալ

Անտառտնտեսության տնօրեն

(անուն, հայրանուն, ազգանուն, ստորագրություն)

ԼՂՀ ԿԱ ՇՐՋԱԿԱ

ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ԽԱՆԱՆՅԱՆ

Հավելված N2
Հաստատված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և
բնական ռեսուրսների վարչության պետի
2013 թվականի _____ -ի
N _____-Ն հրամանով

ՄԵՐԻԱ Ա
N 000000



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՆՏԱՌԱՀԱՏՄԱՆ ՏՈՄՍ N _____

« _____ » _____ 20 __ թ.

| |
|--------------------|
| Անտառտնտեսություն |
| _____ |
| Անտառպետություն |
| _____ |
| Օգտագործման տեսակը |
| _____ |

Հիման վրա

| |
|-------------------|
| Հատման եղանակը |
| _____ |
| Հաշվառման եղանակը |
| _____ |

Թույլատրվում է

_____ հատել բնափայտ 20__ թ. հատատեղային ֆոնդի հաշվին

Անտառսակագնային

գոտի _____ Սակագնի կարգը _____ Զեղչը թույլատրելու հիմքը _____

անտառտնտեսության պետական մարմիններն իրավունք ունեն սահմանված կարգով արգելել անտառահատումը և անտառօգտագործողների կողմից կատարվող այլ աշխատանքները:

Բնափայտի մթերման, անտառօգտագործման և հակահրդեհային պաշտպանության կանոնների վերաբերյալ ծանոթացվել է.

Անտառմթերողի ստորագրությունը _____

Նշումներ մթերման և արտահանման հետաձգումը թույլատրելու վերաբերյալ

Կ. Տ. «Անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրեն _____

Անտառի վերականգնումը ապահովող միջոցառումներն ըստ անտառահատման վայրի զննման նյութերի.

Անտառի վերականգնումն ապահովող մատղաշը պահպանված է _____ հա

Պահանջվում է ստեղծել անտառմշակույթներ _____ հա

Բնական աճի աջակցում _____ հա

«Անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրեն _____ Կ. Տ.

ԼՂՀ ԿԱ ՇՐՋԱԿԱ

ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ԽԱՆԱՆՅԱՆ

Հավելված N3
Հաստատված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և
բնական ռեսուրսների վարչության պետի
2013 թվականի _____-ի
N _____-Ն հրամանով



ՄԵՐԻԱ Ա
N 000000

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՈՄՍ N _____

«_____ անտառատնտեսություն»
մասնաձյուղ

անտառապետություն
պահաբաժին _____ քառակուսի _____ հատված

Անտառոգտագործողի տվյալները _____
անուն, ազգանուն

կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը
Հիմք _____
Թույլատրելի _____

կողմնակի անտառոգտագործման տեսակ
_____ տարածքի վրա (հա)

Նշումներ կողմնակի անտառոգտագործման վերաբերյալ

| Կողմնակի անտառօգտագործման տեսակը | Չափի միավորը | Մթերվող պաշարը | Միավորի արժեքը (ՀՀ դրամ) | Արածեցում | | | | Ընդհանուր գումարի չափը ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) |
|----------------------------------|--------------|----------------|--------------------------|----------------------------|------------------|---------------------------|--|---|
| | | | | գյուղատնտեսական կենդանիներ | գլխաքանակը (հատ) | մեկ գլխի արժեքը (ՀՀ դրամ) | ընդամենը անտառօգտագործման դիմաց գումարի չափը (ՀՀ դրամ) | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Հատուկ պայմաններ՝

- Անտառօգտագործողները պարտավոր են անվերապահորեն պահպանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անտառային օրենսգրքով նախատեսված կողմնակի անտառօգտագործման կանոնները:

- Առանձնակի ուշադրություն դարձնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական աշխարհի պահպանությանը: Անտառներում պահպանել հակահրդեհային պաշտպանության կանոնները:

- Նշված կանոնները խախտելու դեպքում անտառտնտեսությանն իրավունք է վերապահվում սահմանված կարգով արգելել կողմնակի անտառօգտագործումը անտառներից և անտառօգտագործողին պատասխանատվության ենթարկել:

Կողմնակի անտառօգտագործման և անտառային հակահրդեհային պաշտպանության կանոններին ծանոթացել եմ:

Անտառօգտագործող _____

Անուն, ազգանուն

Օգտագործման ժամկետը սկսած «__» «_____» 20 թ.

մինչև «__» «_____» 20 թ.

Կ. Տ.

Մասնաճյուղի տնօրեն _____

Ավագ անտառապետ _____

ԼՂՀ ԿԱ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ԽԱՆԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԱՆՏԱՌՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ՝ ԱՆՏԱՌԱՀԱՏՄԱՆ ԵՎ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՈՄՍԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱՄԱՆԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Պետական անտառների անտառօգտագործումն իրականացվում է անտառահատման կամ անտառային տոմսի հիման վրա: Մույն իրավական ակտը սահմանում է անտառահատման և անտառային տոմսերի ձևերը, ինչպես նաև կարգավորում է բնափայտի մթերման և կողմնակի անտառօգտագործում իրականացնելու նպատակով անտառահատման և անտառային տոմսերի լրացման, տրամադրման, հաշվառման և պահպանման հարաբերությունները:

ԼՂՀ ԿԱ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ և
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ